

Անուշավան Պետրոսյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԲԱՆԱՐԿԵՍՏԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր-Աշտիշատի դիցուհի, բերանբացուկ, ըղտու քարեր, թրքազեն է, «խրատի զարկ», Շամիրամի ուլունքներ, չարխի ֆալակ, վիճակի ժայռ, տիրուհի, քառասուն խորան:

Րաֆֆու «Կայծեր» վեպը¹ ազգագրական նյութերի անսպառ շաղախ է՝ արևմտահայերի ու պարսկահայերի ավանդական կենցաղի ու մշակույթի վերաբերյալ: Սակայն ելնելով հողվածի ընձեռած սահմանափակ հնարավորությունից՝ կանդրադառնանք միայն ժողովրդական մշակույթին ու բանարվեստին:

Ժողովրդական մշակույթը տերմիններում: Րաֆֆու «Կայծեր» վեպը աչքի է ընկնում հարուստ տերմիններով, հանդես գալով որպես ժողովրդական մշակույթի արտահայտման եղանակ: Վեպի այս կողմն արժանի է հատուկ ուշադրության, քանի որ այն մեզանում առ այսօր այս կարվածքով չի դիտարկվել: Համառոտակի կանգ առնենք առավել ուշագրավ մի շարք տերմինների վրա, որոնք խտացված կերպով արտահայտում են ազգագրական տարբեր հասկացություններ ու իմաստներ: Նպատակահարմար է դրանք ներկայացնել այբբենական կարգով:

Անապատ - Հայտնի է մենաստան անունով, իսկ վանքը՝ իջևան: Այդ երկու իմաստների մեջ մեծ տարբերություն չկա: Իր գոյությունը պահպանելու համար մարդը մեկուսացել է հասարակությունից, հատատվել անտառներում, անմատչելի անձավներում, ձորերում, լճերի անբնակ կղզիներում: Անապատների առանձնության մեջ մարդը փնտրում էր հոգևոր մխիթարություն: Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորը, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը մաքառելով դժվարությունների դեմ՝ հուսահատությունից անձնատուր են լինում անապատական կյանքին, թողնում են աշխարհը և հեռանում անապատ², 5,145-146:

Անթառամ - Դեղին գույնով և ծիրանագույն ծաղիկ, բուսնում է այրված քարքարուտների մեջ, 5,490:

Անհանգչելի օջախ - Դա այն սրբությունն էր, որով երդվում էր գյուղացին: Կրակն անընդհատ վառվում էր, որի պատճառով տան առաստաղն ու պատերը մրից սևանում

¹ Րաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու 10 հատորով, հատոր 4, 5, Երևան, 1963:

² «Կայծեր»-ի հատորներից քաղված տերմինների հղումներն արված են տեքստում՝ հատորի և էջի նշումով: Երբ Մ.Խրիմյանը գնում է անապատներից մեկն այցելության, հոգևորականները չէին ցանկանում, որ նա տեսնի գրքերի անմխիթար վիճակը և լցնում են Վանա լիճը: Ջրի վրա լողացող մագաղաթները կաշու են Հայրիկի նավակին: Դրանք Մ.Խորենացու սգավոր ողբի թերթիկներն էին (Տե՛ս Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 187):

էին, 5, 331:

Արաղի կաթսա - Օղի քաշելու սարք, որը տալիս էին վարձով, 5, 215:

Անգղ գետ /անվան ծագումը/ - Վայոց Ձորում դրվեց քրիստոնեության սկիզբը, Բարդուղիմեոսը եկավ Աղբակա կողմերը, իսկ Թադևոս առաքյալը՝ Վայոց ձոր: Անգղ գետի մոտ, ուր այժմ սուրբ Աստվածածնի վանքն է կանգնած, կար մի մեհյան: Առաքյալը այն կործանում է և սկսում են տաճար կառուցել, սակայն ինչ կառուցում էր առաքյալը ցերեկով, գիշերով քանդում են դևերը և լցնում Անգղ գետը: Քարերի կուտակումից առաջացավ մի բարձրունք, որը հայտնի է Սաչան անունով: Աստվածամոր խորհրդով յուղով օծում են խաչքարը և կանգնեցնում կառուցվելիք տաճարի տեղում: Դևերն այլևս չեն մոտենում կառույցին, ստանում են սև ագռավների կերպարանք և նկատելի են դառնում: Անգղերի կերպարանքով հայտնվում են հրեշտակները և պայքարում ագռավների դեմ: Անգղերը հաղթում են, ագռավների մարմինը զցում գետը, որը կոչվում է Անգղա գետ, իսկ գյուղը, որտեղ կառուցվեց ս.Աստվածամոր տաճարը՝ Անգղ գյուղ: Օծված խաչքարը կանգուն է, ձեթ է ծորում, ուխտավորները այն տանում են բժշկելու զանազան հիվանդություններ: Սկզբում ձեթը շատ էր, բավարարում էր վանքի կարիքները, սակայն մի վարդապետ երբ սկսեց ձեթը վաճառել, այն նվազեց, 4, 274:

Արշակա ծովակ - Ըստ ավանդության այնտեղ են բնակվում հայոց ջրային հավերժահարսերը, իսկ հայոց հնագույն ծերունի աստված Արեգը ամեն գիշեր հանգստանում է Վանա ծովակում, որի հատակին դրված է նրա ոսկեդեն անկողինը: Դեռ Լեզ կոչված բլուրի վրա ապրում են արալեզները, որոնք լիզելով՝ կյանք են շնորհում պատերազմում ընկած հայոց քաջերին, 4, 378:

Այդ էլ վարպետի նշանն է - Որպեսզի հավատային, թե անձը վարպետ Փանոսի կողմից է ուղարկված, ներկայացողը ցույց էր տալիս նրա դանակը, տերողորմյան, մորուքի սանրը, մի որևէ բան՝ որպես վարպետի նշան, 5, 30:

Աշտիշատի գեղեցիկ դիցուհի - Աստղիկն ամեն օր վաղ առավոտյան լողանում էր Մուրադ գետի (Եփրատ) ջրերում, իսկ երիտասարդ դուստրուհիները հավաքվելով Դաղոնաց սարի գլխին՝ ցանկանում էին տեսնել նրա մերկությունը: Ուստի, Աստղիկը Մշո դաշտը միշտ պատում է մշուշով¹ 4, 378:

Բարդուղիմեոս առաքյալի աջ - Այն գտնվում է Հաղբակա վանքում, երբ աջը գերի ընկավ պարսիկների ձեռքը, ժողովուրդը նրանց վճարեց աջի ծանրությունից տասն անգամ ավելի ոսկի ու փրկագնեց: Փրկագինը հավաքեցին բոլորից, որպեսզի «իրենց երկրի պաշտպանը գերի չմնա» անօրենների և անհավատների ձեռքը, 4, 383:

¹Մանրամասները տես Գ.Սրվանձությանց, Գրոց ու բրոց, Երկեր, հ.1, Երևան, 1973, էջ 71-72:

Բագունք - Երբ այն աստղերի մոտ է հասնում, գիշերը կես է լինում, ուղիղ կեսգիշերն է, 4,346:

Բերան բացուկ - Հայաստանի շատ վայրերում դեռևս պահպանվել է այս սովորությունը: Նորահարսը առաջին անգամ փեսայի տուն մտնելով՝ չի խոսում ոչ մեկի հետ, բացի իր ամուսնու փոքրիկ եղբայրներից ու քույրերից: Առաջին գիշերը փեսայի հետ չի խոսում, մինչև նրանից չստանա ընծա կոչված բերանբացուկը, 4, 456:

Բինգյոլի ծաղկավետ դաշտեր - Հայրը ցույց է տալիս իր որդուն «Կայենի ծառերը», որոնց հովանու տակ հանգստանում էր առաջին երկրագործը: Նաև «Ղամեքա բերդը»- այն քաջ որսորդի ամրոցը, որը սպանեց Ադամի անդրանիկ, բայց դատապարտյալ որդուն: Ցույց է տալիս այն դաշտերը, որտեղ առաջին խաշնարած Աբելը արածացնում էր իր ոչխարները, իսկ Մարանդի մեջ գտնում էր նա Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանը, 4, 379:

Գայլ ու ոչխար - Ժողովրդական խաղ: Խաղում էին խիճերով 5, 213 : Գուրբան - Նա ցույց տվեց երկինքը, 4, 336:

Գրգուռ սար - Ըստ ավանդության Նոյի տապանը այս սարին քսվելով^a անցավ դեպի Սիփան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրեն իր գազաթի վրա: Սիփանը համեստորեն պատասխանեց, թե ինքը հայոց լեռներից ամենից կրտսերն է, և ցույց տվեց դեպի իր անդրանիկ եղբայրը՝ հսկա Արարատը, ասելով՝ «գնա ի Մասիս, որ բարձր է քան զիս» 4, 379:

Էյվազություն - Հարուստ մահմեդականների տներում սպասավոր ծառայող: Պոլսում մեր ուժերը մաշվում, ոչնչանում են պանդխտության մեջ, 5, 226:

Ըղտու քարեր - Նեմրութի ուղտերի քարացած շարքերը, 5, 410:

Ընկնավոր - Բազմությունը շրջապատել էր մի կնոջ, որը ուշաթափվելով տալիս էր տարբեր հրեշտակների, դևերի, սատանաների անուններ: Վարդապետը ընկնավորի բերանն է դնում խաչը և որոշ ժամանակ հետո դուրս հանում: Ընկնավորն իր մոտ է կանչում Շուշան խաթունին, որը վաճառականի կին էր և տաս տարի երեխա չէր ունենում: Նրան ասում է, որ աղան (Աստված) լսեց նրա խոսքերը և կունենա արու զավակ: Կինը պարանոցից արձակեց ծանրագին շղթան, ոսկե դրամներով և զգեց ընկնավորի առջև: Գրիգոր աղային կանչելով, ընկնավորը հիշեցնում է վանքի հնացած վարագույրը փոխելու մասին¹, 4, 424-425:

Թանաքաման - Կազմված էր պղնձե երկար քառակուսի փողից, որի մի ծայրի կողքին ամրացված էր բուն թանաքամանը՝ թանաքով լցված, ողորկ բաժակի ձևով, որի մեջ սև արեշունի թելեր էր դրված, որպեսզի թելերը հեղուկ թանաքը իրենց մեջ ծծեն, 5, 42:

¹ Ընկնավորների խաբեության և էության ամբողջական նկարագիրը տե՛ս Ա.Պետրոսյան, Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Երևան, 2012, էջ 116-117:

Թրքագեն է - Մահմեդականների մորթած միսը և այլ ուտեստներ քրիստոնյաները պիղծ են համարում և չեն գործածում: Մահմեդականները հայերի պատրաստած ուտեստների նկատմամբ նույն կարծիքն ունեն: Այդ սովորությունը Պարսկաստանի հայերի մեջ էլ կար, 5,25:

Թոփրակ Կալե (հողաբերդ) - Ունի այլ անուններ. Ակռփու քար, Ջըմփ-զըմփ-մաղարա, սակայն դրանցից ոչ մեկը բերդի նախնական անունը չէ: Թոփրակ Կալե լեռան մեջ կան շատ այրեր, քարանձավներ, ստորերկրյա անցքեր, ինչպես Շամիրամի բերդի մեջ: Դրանցից ոչ մեկը բնական չէ, բոլորն էլ փորված են ժայռերի մեջ, 5,70:

Խալաթ - Աշակերտների ծնողները վարժապետներին խալաթ էին տալիս, երբ նրանք մի գրքի կարդալը ավարտում էին, 4, 251:

Խաչագող - Ամոթալի անուն է: Գող, սրբության գող, 2, 292:

Խրատ - Ղասը չսովորած յուրաքանչյուր աշակերտի ափի մեջ տալիս են «խրատի» մեկական սաստիկ զարկ: Խրատ կոչվածը շինված էր ամենաամուր փայտից և ուներ փոքրիկ թիակի ձև, որի վրա փորագրված էին ծեծելու, գանահարության մասին խոսքեր: Խրատելու այդ գործիքը պատրաստում էին վարժապետների համար: Պատիժներից ամենից սարսափելին այն էր, երբ աշակերտին կանգնեցնում էին ձախ ոտքի վրա, աջը գետին դնելու իրավունք չուներ: Նրա ձեռքը տալիս էին աղյուս կամ հայսմավուրքը: Նա պարտավոր էր այդ վիճակով կանգնել ժամեր շարունակ, 4,248:

Կաթնաղբյուր - Ժողովրդի մեջ ուներ սրբազան նշանակություն: Ըստ ավանդության կաթնաղբյուր է կոչվում, քանի որ Տիրամայրը աղբյուրի մեջ ծորացրել էր մի կաթիլ իր սուրբ կաթից: Ջուրն ուներ գերբնական հատկություն, որի մեջ լվացվողը ազատվում էր ցավերից և իրականանում էին նրա ցանկությունները: Լողացողն ընտրում էր այնպիսի հարմար պահ, որ ոչ ոք չխանգարեր իրեն: Կաթնաղբյուրը գտնվում էր քարանձավի ներսում, որի ջրից առաջացած ավազանի մեջ լողանում էին ուխտավորները^a բուժվելու և հոգևոր շնորհ ստանալու ակնկալիքով, 4, 443:

Ծոմ լուծել- Խախտել ծոմապահության կարգը, 1,249: Կարմիր հարսի արաղ-Դեղնագույն ըմպելիք բավական քաղցր և ախորժելի, 4, 511:

Կարմիր ավետարան - Փաթաթված էր նուրբ ասեղնագործած մետաքսե թաշկինակի մեջ: Մագաղաթը այնքան բարակ էր ու հարթ, ինչպես ամենաընտիր թուղթը: Նկարները սքանչելի էին, կազմն ամբողջովին արծաթից՝ թանկագին ակներով ու խաչի քանդակներով, 5, 135-136:

Կաղ դև - Ըստ ավանդության նա սուրբ Կարապետի վանքի մոխիրը տանում լցնում

էր Եփրատ գետը, ծառայում վանքին¹, 5,410:

Կիսանահապետական բնակարան - Ռաֆֆին այդպես է անվանում Սալմաստում իր քեռու ունեցած տունը, 5, 277:

Կորդ - Աննշակ հող, 4, 336:

Կռունկի վանք- Գտնվում է Վան քաղաքի մոտ: Մի անգամ պատարագի ժամանակ վանահոր բաժակի միջի գինին սպառվում է: Մինչև գինի կբերեին, նա սկսում է աղոթել: Տաճարի մեջ հայտնվում է մի կռունկ, կտցին խաղողի ողկույզ և մոտենում է սուրբ խորհրդի սեղանին: Պատարագիչը վերցնում է խաղողը և քամում սկիհի մեջ՝ շարունակելով պատարագը: Այդ օրից վանքը կոչեցին Կռունկի վանք², 5, 123:

Կռապաշտանոց - Կտուց անապատի հրվանդանը, որի վրա մի ժամանակ եղել է կռապաշտների մեհյանը: Հրվանդանի ուղիղ գլխի դիմաց գտնվում է կղզին, որի պատճառով էլ կոչվում է կտուց, որովհետև արագիլի կտուցի նմանություն ունի, 5, 143:

Հաղդա գալ – Խոյի, գոմեշի, եզան և այլ եղջերավոր անասունների գլխով իրար զարկելը, 4, 275:

Հասկաքաղ – Մովսեսի օրենքով հրամայված էր արտերի եզրերը չքաղել և թողնել աղքատներին: Հայերի մեջ այդ սովորությունը նվիրագործված է ժողովրդական ավանդությամբ, 4, 229:

Հեծանոց – Կալի հարդը խառնելու գործիք, 5, 227:

Հրեղեն նժույզներ – Ռշտունիքի ծիերի երամակները, 5, 325:

Ճռաքաղ - Այգեքաղից հետո մնացած ճիռերի հավաքումը նույնպես աղքատներին էր պատկանում, 4, 426:

Միերի դուռ - Թոփրակ Կալե լեռան արևմտյան կողմում, Չարխի-ֆալակի շարունակությունը: Միերի դռան վրա կան բեվեռագրեր, այստեղ է Վանի ամենաընդարձակ արձանագրությունը: Այդ դռան ետևում, ըստ ավանդության, բանտարկված է Միերը: Մի քարայրի մեջ է այդ սարսափելի հսկան, որ մի օր կխորտակի իր շղթաները, դուրս կգա քարայրից, վրեժխնդիր կլինի թշնամիներից, 5, 74:

Մոգունք կամ մոգաց գերեզման - Գյուղը գտնվում է Տավրոսի լեռներում, այստեղ կտրել են հինգ հարյուր մոգերի գլուխները, որից էլ առաջացել է այդ անունը, 5, 446:

Մոխրաբերդ- Ծովի ալիքների մեջ լցրին հրդեհված ատրուշանների և որմզդական մշտական կրակի մոխիրը, որի պատճառով բերդն ստացավ այդ անունը, 5, 273:

Մտավոր ճարտարություն - Ուխտագնացության եկած մարդիկ զբաղված էին իրենց գործով: Մի տեղ աշուղը սազը ձեռքին պատմում էր իր հեքիաթը, իսկ ամբոխը քաջալերում էր ժողովրդական վիպասանին: Մի ուրիշ տեղ երկու աշուղներ մտավոր

¹ Մանրամասները տե՛ս Գ.Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 75:

² Տե՛ս Գ.Սրվանձտյանց, Սուրբ Կարապետի կաղ դևի ավանդությունը, Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 93:

ճարտարության կռվի մեջ էին մտել, տրվում էր հարցը և անմիջապես լսվում պատասխանը, կրվողը ստիպված էր հանձնել սազը, 4, 423:

Նարեկ (Նոր-եկթ) - Գյուղ Ոստանի լեռնահովտում, որտեղ բլրի վրա կառուցված է մի հոյակապ վանք և գտնվում է սուրբ Գրիգոր Նարեկացու մարմարյա գերեզմանը, 5, 314:

Նեմրուֆ սար - Հայկ Նահապետը այդ սարի վրա սպանեց Նեբրովթին, նրա դիակը մեխեց սարին, հետո այրեց: Մնացել են Նեբրովթա քարավանի քարացած ուղտերը, որոնք նրա զորքի համար պաշար էին կրում, քարացան հայոց Աստծու հրամանով: Հայը պարծանքով է հիշում իր նախահոր սխրանքը, որ մեծ մարդու սերունդ է ինքը և շառավիղում է Աստծո արյունից, 4, 379 :

Շամիրամի առու - Գալով հյուսիսից՝ գնում է դեպի Արտամեդ, հետո՝ Վան, ոռոգելով շատ գյուղերի հողեր, 5, 275 :

Շամիրամի ուլունքներ -Հայոց նահապետներից մեկը որոշում է Շամիրամին զրկել երիտասարդներին դյուբելու ունակությունից: Ծերունին գիտեր, որ թագուհու հնարքը ուլունքներով դյուբելու մեջ է: Երբ թագուհին լողանում էր, նա խլում է մանյակը և փախչում ծով: Զայրացած թագուհին իր մազերին պարսատիքի ձև տալով՝ մի քարաբեկոր է զցում նրա ետևից, սակայն չի դիպչում: Ծերունին ուլունքները զցում է ծովը և երկիրն ազատում հեշտանքի թագուհուց: Այդ մասին Արտամեդի երգիչները երգ հորինեցին, որից Մ.Խորենացին հիշում է երեք բառ միայն. «Ուլունք Շամիրամա ի ծով», 5, 264:

Շնաթակ կերավ - Գյուղացիք այնքան ծեծեցին, որ ողջ տեղը միայն ականջը մնաց, 5, 380:

Չաղար (Չարահան, սուրբ Նշանի վանք) - Գտնվում է Ոստանա հովտի մեջ՝ սուրբ Աստվածածին անունով: Այդ վանքում է թաղված Ավարայրի երգիչ Եղիշեն, 5, 313:

Ոշտունիք – Ռաշիդների (քաջերի) աշխարհը ծնել է մի ինքնուրույն ժողովուրդ, որն իր քաջությամբ ետ չի մնում սասունցիներից, 5, 316:

Չարխի ֆալակ - Դա անցք էր, որ Թոփրակ Կալեի գագաթից իջնում էր մինչև լեռան խորքը: Ըստ վանեցիների մեջ պահպանված ավանդության՝ այդ անցքի մուտքը իջեցնում է մինչև Գայլ գետը, որտեղ Բախտը պտտեցնում է աշխարհի անիվը՝ Չարխի ֆալակը: Ամեն թևի վրա «արծանագրված է մի-մի թալիսման մարդկային բախտավորության համար»: Անիվը կանգ է առնում տարին մեկ անգամ, մեկ րոպեով: Դա կատարվում է Համբարձման գիշերը: Մարդը պետք է պատրաստի մոմի թերթիկներով հասնի Չարխի ֆալակ, որ կանգնելիս այն կպցնի թևի վրա, որով «Բախտը վիճակում է նրան»: Ավանդությունն ասում է, որ դա սակավ է լինում, քանի որ «...երբ անիվը կանգ է առնում, նրանց տիրում է խորին թմրություն, նրանք քնում են, և

անողոք անիվը դարձյալ շարունակում է իր արագ պտույտը»,¹ 5, 71-72:

Սաբաթ - Գետը ծովը թափելու տեղում ձկնորսները դնում են իրենց ձկնորսական կողովները՝ ձուկ որսալու համար:²

Սատանի եղունգ - Մեր դպրոցում Սարգիսին դիմում էին այդ անունով՝ իր խորամանկության, ճարակության, անհանգիստ բնավորության համար, 4, 266:

Սիրեկանի խնձոր – խնձորի բաց մնացած հատվածները ստանում են կարմիր գույն, իսկ տերևներով ծածկված տեղերը՝ սպիտակ, որով խնձորի վրա ձևավորվում են զանազան նկարներ: Դա կոչվում է սիրեկանի խնձոր անունով: Հայերի մեջ խնձորը սիրո նշան է: Հարսանիք հրավիրելու համար կարմիր խնձոր են ուղարկում մասնակցին: Աղջիկները գաղտնի խնձոր են ուղարկում սիրած պատանիներին, 5, 103:

Սիրեկանի գերեզման – Ըստ ավանդության, աղջիկը և տղան իրար սիրում են, սակայն աղջկա հայրը դեմ էր նրանց ամուսնությանը: Ուստի, մի գիշեր նրանք փախչում են: Երբ հայրը իմանում է, հետևում է աղջկան և սպանում, տղան չտանելով վիշտը՝ ժայռից իրեն զցում է և մահանում: Աղջկան թաղում են թափված արյան տեղում, իսկ տղային՝ ժայռից ընկած վայրում: Ամեն անցորդ մի քար է նետում նրաց գերեզմանին, որպես նզովք, նախատինք, որ աղջիկը «մրտեց հոր ու մոր անունը», 4, 314:

Սյունաց մեծ անապատ – Հիմնվել է Հալիձոր գյուղի մոտ, հայտնի է Հարանց անապատ անունով: Սյունաց մեծ անապատը կոչվեց Թանահատի վանք:³ Այդ վանքի վանահայրերը խորշում էին ամեն տեսակ ջրալի, տաք ապուրներից, որի պատճառով կոչվեցին թանատյաններ: Վանականները սնվում էին միայն ցամաք հացով ու ջրով, տոն օրերին՝ մի քիչ բուսեղեն յուղով: Շուտով Սյունաց մեծ անապատը լայն հռչակ ստացավ՝ դառնալով կարևոր դպրոց-կենտրոն, որը պահպանեց իր գոյությունը չորս ու կես տասնյակ տարուց ավելի, 5, 148-149:

Վիճակի ժայռ - Այդպես էր կոչվում, քանի որ ուխտավորները այստեղ էին փորձում իրենց բախտը: Ամեն մեկը մոտենալով ժայռին՝ կայցնում էր իր փոքրիկ քարը: Եթե քարը կայցում էր ժայռին, ուրեմն կկատարվեր ուխտավորի ցանկությունը, հակառակ դեպքում տխուր հեռանում էր ժայռից, 4, 427-428:

Վռըշիկների քրդական ցեղ - Առաջացել է Ռշտունյաց նախարարական ցեղից, ինչպես մեր Մամգունյան նախարարներից առաջ եկավ քրդերի մամըկանի ցեղը: Կան շատ քրդական ցեղեր, որոնք հայկական ծագում ունեն, 5, 303:

Տիրամոր ծաղիկներ - Դեղնագույն, մանրիկ և ցամաք թերթիկներով, որոնցով լի է Վանի շրջակայքը: Այն երբեք չի խամրում, որի համար էլ կոչվում է անթառամ ծաղիկ:

¹ Չարիսի ֆալակ մանրամասները տես Գ.Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 87-88:

² Մանրամասները՝ Ա.Պետրոսյան, Գետային ձկնորսության ժողովրդական եղանակները Հայաստանում, ԲԵՂ, 1993, թիվ 3, էջ 163-164:

³ Անվան ստուգաբանությունը՝ Ա.Աբրահամյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, էջ 24:

Նվիրված է Աստվածամորը, Երկնքի անթառամ կույսին, 4, 480:

Տիրամոր նշան - Եթե այն կար անասունների վրա, տերը պարտավոր էր կենդանուն ուղարկել վանք, կամ մղդսիքը գալիս տանում էին: Ոչ մեկն այդ անասուններին գնել կամ վաճառել չէր կարող, քանի որ դրանք վանքի սեփականությունն էին համարվում: Հակառակ դեպքում Աստվածամոր վանքը կարող էր պատժել նաև անասունին: Վանքի մոտ կար մի գյուղ՝ Վանքի գյուղ անունով, բնակիչները ծառայում էին վանքին և հայտնի էին Տիրամոր մղդսիք անունով, 4, 419:

Տիրամոր յարա - Սուրբ Տիրամոր վանքը գտնվում է Վանա ծովակի ափին, Լիմ անապատի դիմաց, Կորդվաց լեռներում: Այն բուժում է բորոտությունից, քսից, զանազան խոցերից: Տիրամոր վանքը առողջ մարդկանց կարող է տալ նույն ախտը, եթե չեն լսում իրեն: Պատահական չէ, որ քոսը, բորոտությունը ժողովրդի մեջ հայտնի է Տիրամոր յարա անունով, իսկ կրողները՝ Տիրամոր խեղճեր, 4, 418:

Տիրուհի - Դա վանականների կողմից ստեղծված մի գործիք է փղոսկրից՝ կոթը քանդակներով, գլուխը կնոջ ձեռքի նմանությամբ, որի ափի մեջ երևում են խարտոցի ատամների պես փափուկ խազեր: Անվան մեջ է այդ գործիքի նշանակությունը, որ կատարում է տան տիրուհու աշխատանք: Հայոց ընտանիքներում դեռ պահպանվել է այն վաղեմի սովորությունը, որ տան տիրուհին քորում էր սկեսուրի, սկեսրայրի, մինչև իսկ հարգելի հյուրերի մեջքը, մաժում նրանց ոտքերը: Քանի որ արեղաները զրկված են տիրուհիներից, հորինել են այդ գործիքը իրենց մեջքը քորելու համար¹, 4, 90:

Քալափչի- Երկաթից պատրաստված գործիք, որն անց են կացնում ծուղակն ընկած գազանի բերանը՝ զսպելու համար: Այդ գործիքը մեր լեզվում կոչվում է գայլ, 4, 242:

Քառասուն խորան -Շինեց Գագիկ Արծրունին այդ մեծ վանքը՝ իր 40 հոյակապ տաճարներով: Այստեղ են գալիս հայ ապաշխարողները՝ իրենց մեղքերին քավություն տալու, «քառասունք էին կատարում» (այսիքնքն 40 տաճարներից ամեն մեկի մեջ պատարագ էին մատուցում), 5, 313:

Քարայրներ- Առավել ուշագրավ են Գրիգոր Նարեկացու ձգնարան- քարայրները: Բարձրադիր ապառաժների մեջ փորված են ինը վիմափոր սենյակներ, 5,314:

Քեշկեկ - Հարիսայի տիպի կերակրատեսակ, 5, 362:

Քիրվա - Հայերը սովորություն ունեն քրդերին դիմել քիրվա բառով, որը նշանակում է քավոր, 5, 303:

Ֆալախկա- Պատրաստում են ուռենու դալար ճյուղերից, կարգը խանգարող երեխաներին ծեծելու համար, 4, 250:

¹ Իմ տեսած գործիքի վրայից երևում է,-գրում է Րաֆֆին,-որ այն պատրաստվել է Զնդկաստանում 12-րդ դարում: Մինչև այժմ տիրուհիները գործածվում են վանքերում, (Րաֆֆի, Կայծեր, հ. 5, էջ 90):

Ժողովրդական բանարվեստը «Կայծեր» վեպում: Պարսկահայության և արևմտահայության կենցաղի, լեզվի, բարբառների փայլուն իմացությունը հիմք է տվել Ռաֆֆուն ժողովրդական բանահյուսությունը ներկայացնել արվեստի մակարդակով, գեղարվեստը բանահյուսությամբ շաղախելու նրբաճաշակությամբ ու հմտությամբ: Վեպում առատ են դարձվածքները, առակները, անեծքները, ասացվածքները, բառակապակցությունները և բանահյուսության տարբեր ժանրերին պատկանող շատ արժեքներ: Ազգագրական նյութերի հետ դրանք յուրատեսակ համ ու հոտ են հաղորդում շարադրանքին, այն դարձնելով հետաքրքիր ու գրավիչ, հանդես գալով որպես սկզբնաղբյուր: Հայ բանարվեստի նմուշները «Կայծեր»-ում համարվում են Ռաֆֆու մանրակրկիտ պրպտումների ու շրջագայությունների, նրա բանահավաքչական գործունեության արդյունք: Վեպից քաղագրված ու խմբավորված նման կարգի նյութերը նպատակահարմար է ներկայացնել այբբենական կարգով, առավել և դիպուկ ընդգծված մտքերը՝ հեղինակի ուղղակի խոսքերով¹:

«Ադամից ավելի մերկ են և Եվայից ավելի բոբիկ», 5, 38: «Աղվեսը հավանոցի մեջ առյուծ կդառնա», 5, 206:

«...աղվեսն իր որջը մտած ժամանակ չի երևում, բայց երբ որսորդները նրա ծակի առաջ մուխ են դնում, խեղճ անասունն ինքն իրեն դուրս է գալիս», 5, 39:

«Ահա քրդական բռնապետության ճյուղակտուր եղած կոճղը», -ասաց Ասլանը քուրդ ծրունու ետևից նայելով, 5, 310:

«Աղքատությունը մահվան հետ միասին մտնում է մարդու շենքից», դա մի անհերքելի ճշմարտություն է, 5, 37:

Ամեն հին բան նշելու համար սրախոսում էին. այդ անցքը շատ հին է, այնքան հին, որ Սիմոն պատվելին իր շապիկը դեռ նոր էր լվանալ տվել, 5, 245:

Անտառը կոտորող կացինի կոթը փայտից են շինում, 4, 396: Անգործությունը մեռելներին է պատկանում, 4, 334:

Անապատը կենդանի մահացություն է, նրա նպատակն է սպանել արտաքին մարդը-մարմինը, որպեսզի կենդանանա ներքին մարդը-հոգին, 5, 145:

«Ազատ չէր հարկից ինքը՝ մշակը, նա ավելի անբախտ էր, քան իր եզը» (վերջինս ազատված էր հարկից), 4, 375:

Առանց ծեծի, առանց տանջանքի, աշակերտը ոչինչ չի սովորի, 4, 248:

«Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում են նրան (մարդուն) ավելի ընտանեկան, ավելի խաղաղասեր, միևնույն ժամանակ երկչոտ: Մինչդեռ լեռը, անտառը պահպանում են մարդու մեջ նրա սկզբնական վայրենությունը և հատկապես նրա սրտի ամրությունը և քաջությունը», 4, 387:

¹ Տեքստում նշված է Ռաֆֆու երկերի ժողովածուի հատորը և էջը:

Արևելքում ընծաները շահ ստանալու միջոց են: Թագավորը տարին մի անգամ խալաթներ է ուղարկում նահանգապետերին կամ նշանավոր աստիճանավորներին: Պետք է ստանա պատասխանը: Կարևորվում է, եթե խալաթը հագել է նվիրյալը: Երբ պետք է գանահարել աստիճանավորին, տանում են նրա վերարկուն և գանահարում, 5, 251:

«Բայց երևում է, որ խաչն էլ խռովել էր իմ գլխին, նա ինձ խելք ու միտք տալու նպատակ չունեի», 4, 253:

«Բարձր քաջությունը անձնագոհություն է պահանջում», 5, 270:

Բեռնակիր ծիապանները, ջորեպանները անընդհատ գործ ունենալով անասունների հետ, այնքան են կոպտանում, որ մի աստիճանով են բարձր լինում անասուններից, 5, 271:

Բոլոր հայերը Տաճկաստանում «էշով են գնում բազար, ծի հեծնելը նրանց արգելված է: Այս սովորությունը կար և Պարսկաստանում, ազնիվ անասունը՝ ձին, մահմեդականների համար էր, իսկ ստոր ավանակը՝ քրիստոնյայի», 5,39:

«Գետինը մտնես, գրողը տանի քեզ, չար սատանա, պատանդ կարեմ, անիծված, նշանդ տեսնեմ», անեծք, 4, 275:

Գիտությունը չոր ու ցամաք սնունդ է տալիս մարդկանց մտքերին, բայց բանաստեղծությունը կենդանացուցիչ սնունդ է տալիս նրանց սրտերին, հոգուն, երևակայությանը, 5,459:

Գլուխդ մի խոնարհեցրու, ծեծողներ շատ կգտնվեն, 4,359:

Գյուղացու երգը նույնքան մելամաղձոտ էր, որքան նրա տխուր սայլակի ճռնչոցը, երկունսն էլ կարծես հառաչանքներ էին արձակում, 5,216:

Գյուղացին զարթնում է արևից առաջ, հանգստանում է արևի հետ: Նա սովոր չէ անքունության մեջ վատնել գիշերային հանգստությունը, 5, 342:

Դեռ ջահել է, արյունը նոր է եփ գալիս, կմեծանա, խելքը գլուխը կգա, 2, 328: «Եթե շատ բան գիտենաս, շուտ կպառավես», 4, 485:

Երբ «Հայր-մերը» թարս են կարդում Հիսուս Քրիստոսի շնորհքով, սատանան իր պոչի վրա մեխվում է գետին, էլ չի շարժվում տեղից, 5, 44:

Երեխայի մաքրությունից կարելի է գաղափար կազմել և մոր մաքրության մասին, 5, 23:

Ընտանեկան կյանքի մեջ բռնակալ հայրը երկաթե գավազանով էր իշխում, 5, 220:

Թե ուզում ես այս աշխարհում ապրես, պետք է գայլի հետ գայլ դառնաս, գառան հետ՝ գառ, 4, 359:

«Թող Երուսաղեմի սուրբ տաճարի մեջ իմ տեսած լույսը աչքս կուրացնի, թող ես Քրիստոսի մեխ խփողներից մեկը լինեմ», եթե սուտ ասեմ, 5, 78:

Թշնամու հետ անգութ է իբրև գազան, բարեկամի հետ բարի է, իբրև հրեշտակ: Նրա դեմքն այնքան պայծառ է, ինչպես ոշտունյաց պարզ երկինքը, 5,316:

«Թուրքին ծեծիր, հետը բարեկամացիր», 5,270: Թուքը բերանի մեջ սառեցնելու չափ ցուրտ էր, 5,469:

Թրի ծայրից արյուն է կաթում, բոլորը սարսափում են, դողում նրանից, 5, 220: Ժամանակը, ծերությունը և հոգևոր կոչումը մեղմացրել էին նրա սիրտը և դեմ էին տվել բարի ու առաքինական արտահայտություն, 5, 288:

«Ժողովուրդը կողոպտել և տաճարներ կառուցել,- հազիվ թե կարելի է բարեպաշտություն համարել», 5, 233:

Ինչ լավ բան է գիտությունը, որքան նախապաշարմունքներ, սնահավատություններ է փարատել այն, 5, 282:

Իր խրճիթի մարած օջախի նման մխում է նրա սիրտը, երբ իր ցեղի ազատությունը կորած է տեսնում, 5, 311:

Իր կշռով ոսկի արժի այդ մարդը, բացել է ուսումնարան և մեր զավակները շենք ու շնորհք են սովորել: Առաջ կապելու գծեր էին, հիմա գառնուկի նման խեղճացել են, 5, 222:

Խալֆա Թորոսին ասում էին «դպրոցի շուն», առավել այն պատճառով, որ ամենքին կծում էր, ամենքի վրա հաչում, 4,277:

Խրիմյան Հայրիկի ուխտյալ երկիրը Վասպուրականն էր, հայրենասիրությունը հասնում էր մոլեռանդության, իսկ կրոնասիրությունը, մինչև բարձր առաքինության, 5,184:

Խրիմյան Հայրիկը ընդամենը 36 տարեկան էր, կարծես Հայրիկ անունը վաղ էր նրա հասակին, սակայն նրա նախածեռնությունները և սերը լրիվ հասկանալի էին դարձնում այդ անունը, 5, 183:

Ծովը մտնողը թրջվելուց չի վախենա, 5, 206:

Ծիծեռնակը սրահի ձեղունի գերաններից մեկի կողքին կացրել էր իր բաժակածև բույնը, 5, 101:

Կարծես ինձ համար կարմիր հարս է դարձել, սպասում է, որ ես «բերանբացուկ» տամ (ասում է Մարոն լուռ մնացող տղամարդուն), 4,456:

«Կինը մի դառը պատիժ է տղամարդու համար»,- ասում էր նա հիասթափված կանանցից, իր սերը դարձնելով ջորիների վրա, 5, 269:

«Կովը կովի մոտ են կապում, հորթը՝ հորթի մոտ, եզը՝ եզան մոտ», 4,405: Հայր աղոթում է միայն այն ժամանակ, երբ տերտերը նույնպես աղոթում է:

Եկեղեցու պատերից դուրս՝ նա Աստծուն չի մտաբերում, 5,272:

Հարգանքը դեպի ծերը և նրա խրատները, այդ հասարակության մեջ, սրբագործված

կանոններից մեկն էր (Ռշտունիք), 5,328:

«Հաջի Իսաղի ասածներից եթե հազարից մեկը ճշմարիտ լինի, ջորին կծնի», 5,391:

Հասուն այնքան մեծ ընտանիք ուներ, որքան մեծ թվով չորքոտանիներ, 2, 481:
Հարուստները սովորություն ունեն իրենց հարստությունը ծածկել աղքատության կեղևի տակ, 5, 399:

Հայկական գեղարվեստը, ճարտարապետությունը զարգացավ վանքերի շինության մեջ, իսկ հայկական գեղասեր ճաշակը՝ տեղերի և տեսարանների ընտրության մեջ, 5, 247:

Հենց որ երեխան տանը մի ծպտուն է հանում, մայրն ասում է. վարժապետիդ կկանչեմ: Նա սկսում է դողալ և լեզուն քաշել, 5, 222:

Հին վիշապները շուտ չեն պառավում (կտեսնես շատ քիչ փոխված), 1,302: Ձրի հացը մարդուն գիրացնում է, 5, 422:

«Մարդ կա, որ հազար մարդու արժե, հազար մարդ կա, որ մի մարդ չարժե», 4, 356:

Մայրս գիշեր ու ցերեկ հանգիստ չուներ. «ասեղը, ջահրեն և թեշին անընդհատ գործում էին», 4, 230:

Մայրս ինձ հանձնելով վարժապետին, ասաց. տեր հայր, «...որդիս քեզ համար դուլ (ճորտ) եմ բերել, միսը քեզ, ոսկորը մեզ. ինչ ուզում ես արա, միայն երեխան մի բան սովորի», 4, 244:

«Մեր գյուղացիների ձեռքում երբ օտար հյուր է ընկնում, շուտով բաց չեն թողնում», 5, 341:

Մեր կառավարությունը փափուկ տեղերի փորփորողն է, երբ պինդ տեղը հասավ, բրիչը մի կողմ կոնի: Քրդին չեն նեղացնի, քանի որ նրանց տունը կթալանեն կամ գլուխները կկտրեն, 5,334:

Մեր ներկան մեր անցյալի շարունակությունն է, 5, 212:

Մեր տանը ոչինչ չէր մնացել, այն նմանվում էր մերկ գերեզմանի, 4, 220:

Մեծերը ընծաներ են տալիս փոքրերին և նրանցից փող ստանում, կաշառակերությունը վերևից իջնում է ցած, 5, 251:

Մի լավ գիրքը կարող է փրկել մի ամբողջ ազգ, 5, 459:

Մինչև մահ տատը չթողեց իր ձեռքի կառավարման գավազանը՝ ահագին փայտյա շերեփը, որով նա ընթրիքի ու ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում, 4, 211:

Մինչև չաղտորվի, չի պարզվի, 5,259:

Մուհամեդը տվեց իր ժողովրդին սուր, իսկ Քրիստոս՝ խաչ. ահա զանազանությունը մեր և մահմեդականների միջև, 4, 358:

Նա դեռ չսիրած, սիրո համար նվերներ էր պատրաստում (փոքր աղջկա մասին է խոսքը), 5,103:

Նա այն անձնավորություններից է, որ, «սև ջրից սեր կքաղի» (ամենաչնչին բանից օգուտ քաղել գիտե) 5,207:

Նա դեռ նստած էր իր խրճիթի տանիքի վրա և արևի ճառագայթներով տաքացնում էր սառած մարմինը, 5,313:

Նա ներկայացնում էր գեղեցկությունն իր հասունության մեջ, 5,476:

Նա հաջողված էր, նրա հեզ, հրեշտակային աչքերը նույնպես ծփում էին, 5, 402: Նա իսկապես շատ դժբախտ մարդ էր, տխուր և դառը կերպով էին անցել նրա օրերը, 5, 460:

Նրա եզներից երկուսն ընկան բարձր ժայռից, մեկն էլ հիվանդ է. «հիմա նրա արորը բոլորովին անգործ մնաց», 5, 326:

«Նիզակը գողացողը առաջ նրա թաքցնելու տեղը կգտնի», 4,515: Շանը մինչև չծեծես, չի բարեկամանա, 4, 276:

Ով իր անցյալը չի մոռանում, ներկայի մասին կարող է հոգալ, 5,264:

Ով որ չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել նրան, 5,279: Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մեջ չորս կուսակցություն կա:

Անմիաբանությունը վաղեմի ժամանակներից մեր ազգը ուտող, մաշող ցեցն է եղել, որը ժառանգաբար անցել է մեզ, 5, 210:

Ողորմած եղիր դեպի քեզանից տկարները, բայց թշնամուդ մի խնայիր, 1, 359: «Որդի, մինչև ծեծ չուտես, մինչև նեղություն չքաշես, բան չես սովորի», 4, 252: «Ուտքի թաթերից մինչև վարտիքի ծայրը,-այդ ընդարձակ տարածությունը,- մնացել էր մերկ, որովհետև Սիմոն պատվելին սովորություն չունեի ամառը գուլպա հագնելու», 5, 246:

Որքան մեծ գորություն ունի գիրքը, 5, 272: Չարը միշտ չարով կսասանվի, 4,454:

Պառավը դուրս եկավ, նայեց երկինք, իմանալու թե գիշերվա որ ժամն է, աստղերը նրա ժամացույցն էին, 5,352:

Սալմաստում «ահագին մոխրաբլուրները հիշեցնում են մոզական ատրուշանները և սրբազան կրակի հազարավոր տարիներով լափած նյութերը», 4,223:

Սիմոն պատվելին մոտենում էր արաղի կաթսային և արաղը փորձելով ասում. «հիմա ավելի թունդ է: Կարծես նա մի չափ լինեի, որով այգետերը անընդհատ փորձում էր արաղի թնդության աստիճանը», 5,215 :

«Սոխը որտեղ էլ տնկես, իր համն ու հոտը չի կորցնի», 5,334:

Սովը, տարբեր հիվանդությունները, բռնակալների գազանությունները ստիպում էին մարդկանց, ցավերից ազատվելու նպատակով, իրենց զցել «Աստծո գիրկ», հանգստություն որոնելով «հետգերեզմանյան խաղաղության մեջ»: Առաջանում է վակուում դեպի անապատ, դեպի ամայություն, 5, 147:

Սոլա գետը «...Սալմաստա Նեղոսն է,-որի բազմաթիվ ձյուղերի վրա... շարված են

մեծ ու փոքր գյուղեր», 4,222-223:

Ստեփան, այն ի՞նչ պտուղ էր, որ Ադամը կերավ մերկացավ, Եվան կերավ, խենթացավ (թուզ), 5,45 :

Սրի հետ խաղացողը, միշտ սրով կմեռնի, 4,454:

Սրբիր անբախտի արտասուքը, մխիթարիր նրան, եթե պահանջվի քո կյանքն ու արյունը, 4,454:

Վարժապետը ասում էր. «Կուշտ փորով չի կարելի դաս սովորել, երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակասում է», 4,248:

Տան գաղտնիքը երեխից հարցրու, (առած), 5,105: Տեսած բան է, աղջիկը ուր, կարդալը ուր, 5,214:

«Տիրամոր յարան (խոցը) ընկնի քո վրա», (անեծք) , 4,421:

«Քարանձավներում ջիններ (դևեր) են բնակվում, այնտեղ գնացողը այլևս չի վերադառնում», 5,71:

«Քարավան- Դա արևելքի շարժական կյանքն է», 5,254:

Քրդերի հովվական երգերը տխուր են և մելամդձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակվում են հովվի սրնգի խուլ և զգայուն հնչունների հետ: Մինչդեռ, պատերազմական երգերը կրակոտ և խրոխտ են, նրանք լիահնչյուն համարձակությամբ որոտում էին թմբուկների ձանի հետ, 1,361:

Այսպիսով, ժողովրդական բանարվեստի վերոհիշյալ նմուշները անփոխարինելի գանձ են մեր ավանդական կենցաղամշակութային ամենատարբեր խնդիրների մասին: Դրանց զգալի մասը բացակայում է գրավոր աղբյուրներում, հեղինակը գրառել է ժողովրդի բանավոր խոսքից, որոնք ինչ- որ չափով առկա են նաև մեր ժամանակներում:

Анушаван Петросян, Народная культура и фольклорное искусство в романе Раффи "Искры" - Впервые делается попытка вынести из романа описания Раффи, относящиеся народной культуре, которые до сих пор не были удостоены внимания. Несколько десятков терминов, записанные от западных армян и персидских армян во время путешествия, касаются традиционному быту и культуре. Они имеют энциклопедическое содержание, отсутствуют или незначительно известны в словарях. Роман "Искры" богат также различными жанрами народного фольклора, которые передают изложению уникальный вкус и аромат. В романе налицо незаменимые сокровища народной культуры и фольклорного искусства, которые до нас дошли благодаря Раффи.

Anushavan Petrosyan, Folk culture and folklore in the novel "Sparks" by Raffi- In the present article for the first time is tried to draw out from the novel descriptions of Raffi concerning folk culture, which were disregarded thus far. Some dozen terms written down by the writer during his travels from Western Armenians and Persian Armenians concern the traditional way of life and culture. They have an encyclopaedical contents, are absent or are not well defined in known dictionaries.

The novel "Sparks" is also rich in different genres of folklore, which give a special savour to the text. Folk culture and folklore presented in the novel are invaluable treasures inherited by Raffi.

Անուշավան Պետրոսյան - պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ: